

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### «ՆԱԻՐԻԻ ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊՈԱԿ-ՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՏԵՍՉԱԿԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

05.12.2016թ.

ք. Երևան

#### 1. Տեսչական ստուգման հիմքը

- «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մաս:
- ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ «Հայաստանի Հանրապետության կրթության պետական տեսչության 2016 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N° 1054-Ա/Ք հրաման:
- ՀՀ կրթության պետական տեսչության պետի՝ 2016 թվականի հոկտեմբերի 26-ի՝ «Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում տեսչական ստուգում (այսուհետ՝ ստուգում) իրականացնելու մասին» N° 14-Ա հանձնարարագիր:

#### 2. Տեսչական ստուգման նպատակը

Կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների, կրթության որակի բարձրացման և կրթական ծրագրերի յուրացման ապահովման, ինչպես նաև կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման, կրթության որակի ապահովման նկատմամբ պետական վերահսկողության իրականացում:

#### 3. Տեսչական ստուգման ժամկետը և ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը

- Տեսչական ստուգումն իրականացվել է 2016 թվականի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 11-ը:
- Ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը՝ 2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև ստուգումն սկսելու օրը:

Ստուգումն իրականացվել է ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N°598-Ն որոշման N°N° 22, 23 և 24 հավելվածներում ընդգրկված հարցերի շրջանակում:

#### **4. Տեսչական ստուգում իրականացրած խմբի կազմը**

ՀՀ կրթության պետական տեսուչներ՝ Կարինե Արսենյան (խմբի ղեկավար) և Կարինե Գրիգորյան:

Ներգրավված մասնագետներ՝ Գայանե Գասպարյան, Աննա Գալստյան, Արմեն Խաչատրյան, Լուսինե Գևորգյան, Մանյա Սահակյան, Ջուլետա Արտաշյան, Վարդան Մեջլումյան, Արմինե Սիմոնյան, Կարինե Ստեփանյան, Լյուդմիլա Իշխանյան, Թամարա Սիմոնյան, Վարդան Մելիքյան և Հայարփի Սահակյան: Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝ Նոնա Նարինյան:

#### **5. Ուսումնական հաստատության կարգավիճակը, հիմնադիր և կառավարման մարմինները**

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ուսումնարան) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ հանդիսացող նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Նաիրիի արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը:

Ուսումնարանի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

Կարինե Գրիգորի Մեիրաբյանը տնօրեն է աշխատում 1994 թվականից:

#### **6. Ուսումնարանի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան**

Ուսումնարանը գործում է ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքի Երևանյան 10 հասցեում: Ուսումնական շենքի ընդհանուր մակերեսը 2650մ<sup>2</sup> է, հողատարածքը՝ 2298մ<sup>2</sup>:

Ուսումնարանի ոչ տիպային մասնաշենքը վերանորոգված չէ: Վերանորոգվել է մասնակի 1996 թ-ին: Մասնաշենքում տեղաբաշխված են տնտեսական և վարչական նշանակության սենյակներ, դասասենյակներ, մասնագիտացված դասասենյակներ, սանհանգույցներ (որոնք անմխիթար վիճակում են):

Ուսումնարանը ունի ուսումնական պլանով նախատեսված փականագործական արհեստանոց, ուսումնական խոհանոց, փականագործական սարքավորումների արհեստանոց, լաբորատորիաներ (ֆիզիկայի և քիմիայի), որոնց կահավորումը, տեխնիկական հագեցվածությունը մասամբ է համապատասխանում չափորոշիչների պահանջին:

Ուսումնարանում առկա ուսումնական պլանով նախատեսված մասնագիտական դասասենյակներն են՝ փականագործական, ֆերմերային տնտեսության, համակարգչային, հայոց լեզվի և խոսքի մշակույթի, ռուսաց լեզվի, մաթեմատիկայի, պատմության, ՆՁՊ-ի, խոհարարության, վարսավիրության: Առկա են ուսումնական լաբորատորիաներ՝ քիմիայի, համակարգչային և հեռահաղորդակցման տեխնիկայի: Կահավորումը, տեխնիկական հագեցվածությունը մասամբ են համապատասխանում առարկայի /մոդուլի/ ծրագրով նախատեսված պայմաններին:

Մասնաշենքը ջեռուցվում է փայտի վառարաններով, առկա է հակահրդեհային համակարգը: Ուսումնարանի մասնաշենքում գործում են երեք սանհանգույց, որոնք գտնվում են ոչ բավարար վիճակում, դասասենյակները, արհեստանոցները կահավորված են մասամբ, առկա է վոլտբոլի, ֆուտբոլի մարզահրապարակ: Շենքի մուտքերը երկուսն են և չունեն թեքահարթակ: Շենքը երկհարկանի է: Ուսումնարանի մասնաշենքի նախագծային հզորությունը նախատեսված է 260 սովորողի համար՝ չնայած նրան, որ նախկինում եղել է մանկապարտեզ:

Ուսումնարանի երկու միջանցքներում տեղադրված են սովորողների կատարած աշխատանքների ցուցապաստառներ: Ուսումնարանը չունի բուժկետ (արհեստանոցներում օգտագործվում են առաջին բուժօգնության պարագաներով դեղատուփեր), մարզադահլիճ (դասերն անցկացվում են հարմարեցված սենյակում), ճաշարան, ուսումնական զենքի պահպանման սենյակ, ուսումնական զենք:

Ուսումնարանում առկա են չվերանորոգված լսարաններ և արհեստանոցներ, որոնց վերանորոգման դեպքում ուսումնական գործընթացը կիրականացվի առավել արդյունավետ: Շենքը հիմնովին վերանորոգման կարիք ունի: Վերանորոգման դեպքում ուսումնական գործընթացը կիրականացվի առավել արդյունավետ:

**7. Կրթության բովանդակությանը համապատասխան՝ կրթական գործընթացի կազմակերպումը, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարումը, տարեկան ուսումնական ժամանակացույցների, դասացուցակների պահպանումը**

### **7.1. Կրթական գործընթացի կազմակերպումը**

Ուսումնարանում կրթական գործընթացը կազմակերպվում է առկա ուսուցմամբ՝ հետևյալ մասնագիտություններով՝ 1013.03.01.4-«Գյուղացիական /ֆերմերային/ տնտեսության կազմակերպում», 1013.03.01.4-«Խոհարարական գործ», 1041.02.05.4-«Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում», 1012.01.03.4-«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»: Բոլոր մասնագիտությունների գծով համապատասխան լիցենզիաները առկա են:

Ուսումնական պարապմունքները ուսումնարանում իրականացվում են խմբերով, հիմնականում դասի, դասախոսության, գործնական աշխատանքների, ռեֆերատների, ստուգողական /թեմատիկ/ աշխատանքների, պրակտիկաների ձևով: Լսարանային պարապմունքների բոլոր ձևերի համար սահմանված է ակադեմիական ժամ՝ 45 րոպե տևողությամբ:

Ուսումնարանում ուսումնական գործընթացն իրականացվում է ուսումնական պլանների հիման վրա կազմված ուսումնական գործընթացի առարկայական ժամանակացույցին համապատասխան:

Դասացուցակները համապատասխանում են ուսումնական պլաններին, նախատեսված ժամաքանակները (ըստ դասամատյանների) ամբողջությամբ կատարված են:

Մասնագիտական մոդուլների ծրագրերով նախատեսված գործնական պարապմունքներն ամբողջական և արդյունավետ իրականացնելու համար ուսումնական պրակտիկաները, ինչպես և արտադրական ուսուցման ծրագրով նախատեսված որոշ պարապմունքներ անցկացվում են ուսումնարանի հետ պայմանագիր կնքած կազմակերպություններում: Արտադրական պրակտիկայի արդյունքների հաշվառման և ամփոփման վերաբերյալ դասամատյաններում կատարվում են գրառումներ, սովորողները պրակտիկայի արդյունքների վերաբերյալ ներկայացնում են լրացված օրագրերը և պրակտիկայի անցկացման վայրերից տրված բնութագրերը:

Ուսանողները մասնակցել են տարբեր հանրապետական մրցույթների՝ գրավելով մրցանակային տեղեր:

### **Ուսումնարանի մատենավարությունը**

Ստուգման ընթացքում ուսանողների հաճախումները կազմել է 91,3% (8,7%-ը բացակայել են):

Ուսումնարանում կիրառվող միջանկյալ ատեստավորման հիմնական ձևերը թեմատիկ, ստուգողական աշխատանքներն են: Ուսումնական մասի կողմից կազմվել և հաստատվել է թեմատիկ ստուգողական աշխատանքների անցկացման ժամանակացույցը: Թեմատիկ ստուգողական աշխատանքները պահպանվել են ամբողջությամբ:

Ուսումնարանում գործում են 4 մասնախումբ՝ հումանիտար, բնագիտամաթեմատիկական, ընդհանուր մասնագիտական և «Նախնական գինվորական պատրաստություն», «Ֆիզիկական կուլտուրա» առարկաների: Մասնախմբերի աշխատանքների ուսումնասիրություններից պարզվել է, որ մասնախմբերը գործում են հաստատված կանոնակարգին համապատասխան, ունեն աշխատանքային ծրագիր, նիստերի անցկացման ժամանակացույց և օրակարգ, նիստերի վարման արձանագրություններ: Մասնախմբերում

քննարկվել են առարկայական ծրագրերը, ավարտական քննությունների քննատոմսերը, առարկաների դրվածքը, փոխադարձ դասալսումների և բաց դասերի արդյունքները:

Ուսանողների պատրաստվածության մակարդակը, դասի տեխնիկական հագեցվածությունը, մանկավարժական աշխատողների մասնագիտական և մանկավարժական վարպետությունը գնահատելու նպատակով ստուգումների ընթացքում տեսչական խմբում ներգրավված մասնագետների կողմից անցկացվել են դասալսումներ:

### **Դասալսումների արդյունքում արձանագրվել են հետևյալ արդյունքները.**

#### **Հանրակրթական առարկաներ՝**

<<Հայոց լեզու>> և <<Հայ գրականություն>>-<<գերազանց>>,

<<Ռուսաց լեզու>>-<<շատ լավ>>,

Օտար լեզու/անգլերեն/-«լավ»,

<<Հանրահաշիվ>>, <<Երկրաչափություն>>-<<լավ>>,

<<Ֆիզիկա>>-<<լավ>>,

<<Հասարակագիտություն>>-<<լավ>>,

<<Հայոց պատմություն>>-<<լավ>>,

<<Ինֆորմատիկա>>-<<լավ>>,

<<Նախնական զինվորական պատրաստություն>>- <<բավարար>>,

«Ֆիզիկական կուլտուրա»-<<լավ>>:

#### **Մասնագիտական առարկաներ՝**

1013.034 - <<Խոհարարական գործ>> - <<լավ>>,

1012.01.03.4 - <<Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում>> - <<լավ>>,

1041.02.05.4 - <<Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում>> - <<լավ>>,

1013.03.01.4 -<<Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում>>- <<լավ>>:

### **7.2. Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարումը, տարեկան ուսումնական ժամանակացույցների, դասացուցակների պահպանումը**

Ուսումնարանում առկա են բոլոր մասնագիտությունների ուսումնական պլանները, որոնք քննարկվել են մանկավարժական խորհրդում և հաստատվել տնօրենի կողմից:

Ուսումնարանում առկա են հաստատված հանրակրթական և մասնագիտական առարկայական ծրագրերը և թեմատիկ պլանները:

Բաշխված ժամաքանակները համապատասխանում են ուսումնական պլաններին: Դասացուցակները համապատասխանում են ուսումնական պլաններին, նախատեսված ժամաքանակները ամբողջությամբ կատարված են (ըստ դասամատյանների):

## **8. Սովորողների և շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, գնահատման, ամփոփիչ ատեստավորման, քննակարգերի, աշխատակարգերի պահպանումը**

Ուսանողների գիտելիքների ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է մոդուլների ամփոփմամբ, ստուգարքների և կիսամյակային միջանկյալ ատեստավորումներով:

Ըստ տարիների՝ հրամանագրված է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի պահանջներն ամբողջովին կատարած ուսանողների՝ պետական ամփոփիչ ստուգմանը մասնակցելու թույլտվությունը: Մասնագիտական մասնախմբում քննարկվել և տնօրենի կողմից հաստատվել են պետական ամփոփիչ քննությունների քննական առաջադրանքները:

Ուսումնարանում առկա են 2015, 2016 թվականների ավարտական քննությունների և պետական ամփոփիչ ստուգման անցկացման ժամանակացույցները: Առկա են պետական ամփոփիչ ստուգմանը մասնակցած ուսանողների քննական գնահատականների արձանագրությունները, ամփոփ տեղեկագրերը: Առկա են ուսանողների՝ ավարտական քննություններին և պետական ամփոփիչ ստուգմանը թույլատրելու, շրջանավարտներին որակավորում շնորհելու, դիպլոմները բաշխելու վերաբերյալ ուսումնարանի տնօրենի հրամանները:

Առկա են 2016 թվականին ավարտական քննություններին չներկայացած և վերաքննություններ ունեցող ուսանողների՝ վերաքննություններ հանձնելու մասին հրամանը և ժամանակացույցը:

## **9. Ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման կարգերին համապատասխան՝ սովորողների շարժը**

2014-2016թթ. սովորողների ընդունելության գործընթացի ուսումնասիրության արդյունքում ընդունելության գործընթացը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

2014-2015, 2015-2016 ուսումնական տարիներին և մինչև 2016-2017 ուսումնական տարվա նոյեմբերի 1-ը կրթությունից դուրս են մնացել 41 ուսանող, որոնցից ՀՀ ազգային բանակ են զորակոչվել 6-ը: Վերականգնվել են 5-ը, այլ ուսումնական հաստատություն է տեղափոխվել 1-ը: Բոլորի ընդունման և ազատման հրամաններն առկա են:

2014-2015, 2015-2016 ուսումնական տարիներին և մինչև 2016-2017 ուսումնական տարվա նոյեմբերի 1-ը ակադեմիական արձակուրդում գտնվող և ակադեմիական արձակուրդից վերադարձած ուսանողներ չկան:

Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ուսանողների վերականգնման, տեղափոխման վերաբերյալ լիազորված մարմին ներկայացված հաշվետվությունների մեջ նշվել են

ուսանողական իրավունքի վերականգնման, տեղափոխման հիմքը, կրթական ծրագիրը, կիսամյակը, ուսուցման ձևը, մասնագիտությունը

- սահմանված ժամկետում ձևավորվել և հրամանագրվել է ընդունող հանձնաժողովի կազմը,
- առկա են դիմորդների հաշվառման գրանցամատյանները,
- առկա են ընդունող հանձնաժողովի աշխատանքային պլանները, նիստերի արձանագրությունները,
- ընդունված ուսանողների անձնական գործերում առկա են անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Ուսումնարանի 2014-2015, 2015-2016 և 2016-2017 ուսումնական տարիների ընդունելության վերաբերյալ թվային տվյալները, ըստ մասնագիտությունների, ներկայացված են աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1

Մասնագիտություն ՄՅվորտ	Կուրսը	Ուսանողների թիվը 2014-2015 ուստարվա սեպտեմբեր 1-ի դրությամբ			Ուսանողների թիվը 2015-2016 ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ			Ուսանողների թիվը 2016-2017 ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ			Ուսանողների թիվը ստուգման պահին		
		հիմնական ընդհանուր խմբի կրթության հիմնական ընդհանուր կրթության հիմքով կրթության հիմքով՝ առանց միջնակարգ կրթություն ստանալու իրավունքի	Միջնակարգ(ընդհանուր կրթության հիմքով)	հիմնական ընդհանուր կրթության հիմքով	հիմնական ընդհանուր կրթության հիմքով	Միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով	հիմնական ընդհանուր կրթության հիմքով առանց միջնակարգ կրթություն ստանալու իրավունքի	հիմնական ընդհանուր կրթության հիմքով	Միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով	հիմնական ընդհանուր կրթության հիմքով առանց միջնակարգ կրթություն ստանալու իրավունքի	հիմնական ընդհանուր կրթության հիմքով	Միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով	հիմնական ընդհանուր կրթության հիմքով առանց միջնակարգ կրթություն ստանալու իրավունքի
1	2	3	4	5	6		7	8		9	10		
2401	I	-			10			18			15-1*		
	II	15			-			6		6			
	III	15			9			-		-			
2304	I	20			-			18			12		
	II	-	20		20	20		-	20		-		
	III	-						18			15		
2311	I	20						12			16		
	II	16			17			-				19	
	III				15			15			17		
3112	I				11								
	II							9			8		
	III	17											
Ընդամենը	I	40			21			48			43-1*		
	II	31	20		37	20		15	20		14	19	
	III	32			24			33			32		
Ը Ն Դ.		103	20		82	20		96	20		89	19	
			123			102			116			108*-1=107	

**10. Ավարտական պետական փաստաթղթերի ստացումը, պահպանությունը և բաշխումը, գործավարությունը, հաշվետվությունների իսկությունը**

2015 թվականին ուսումնարանը ունեցել է 38, 2016 թվականին՝ 43 շրջանավարտ: Ավարտական պետական փաստաթղթերի բաշխման վերաբերյալ գրառումները կատարվել են

էջակալված և կարված գրանցամատյանում, որը պարունակում է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի՝ դիպլոմների և դրանց ներդիրների (այսուհետ՝ դիպլոմ) պատվիրման, լրացման, հաշվառման և պահպանման կարգով սահմանված տվյալներ: Բաշխման մատյանում առկա են բոլոր շրջանավարտների՝ դիպլոմներ ստանալու վերաբերյալ ստորագրությունները: Դիպլոմների բաշխումից հետո սահմանված կարգով հաշվետվություն է ներկայացվել ՀՀ ԿԳ նախարարություն:

2014-2015, 2015-2016 ուսումնական տարիներին ավարտական փաստաթղթերը (դիպլոմներ) տրվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով ուսումնառությունն ավարտած և պետական ամփոփիչ ատեստավորումից դրական գնահատական ստացած շրջանավարտներին, որի համար հիմք են ծառայել պետական որակավորող հանձնաժողովների որոշումները: Նշված ուսումնական տարիների ընթացքում գերազանցության դիպլոմ չի տրվել:

Շրջանավարտներին դիպլոմները տրվել են անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի ներկայացմամբ:

Ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածում ուսումնարանում ստացվել են լիազորված մարմնի և (կամ) տարածքային կառավարման մարմնի ղեկավարների թվով 167 հրամաններ, հրահանգներ, հանձնարարականներ, որոնք սահմանված ձևով գրանցվել են, հասցեագրվել, և ապահովվել է դրանց կատարումը:

**11. Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ անհրաժեշտ մեթոդական տեղեկատվությամբ, ծրագրերով, դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, այլ անհրաժեշտ փաստաթղթերով ապահովվածությունը**

Տեղեկատվական նյութերի, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և չափորոշիչներով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերի առկայության մասին տվյալները ներկայացված են հավելված 23.2-ում:

Ուսումնարանը մասամբ հագեցած է տեղեկատվական նյութերով, դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և ուսումնադիդակտիկ պարագաներով: Առկա են նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր (թեստային առաջադրանքներ, քննատոմսեր, մոդուլների ամփոփման նյութեր), հանրակրթական առարկայախմբի առարկաների բավարար քանակությամբ դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ:



Գրադարանի ընդհանուր գրքային ֆոնդը ընթացիկ տարվա հոլտեմբերի 1-ի դրությամբ 3743 օրինակ է. այդ թվում՝

հասարակական-քաղաքական 13 (օրինակ)

մասնագիտական 2131 (օրինակ)

ընդհանուր գիտական 57 (օրինակ)

գեղարվեստական 1339 (օրինակ)

դասագրքեր 203 (օրինակ)

Առկա գրքային ֆոնդը մասամբ է ապահովում ուսումնարանի ուսումնական գործընթացը: 2014 - 2016թթ. գրադարանը ստացել է 339 օրինակ գրականություն:

**12. Ուսումնական հաստատության ղեկավար, մանկավարժական կադրերի ընտրության, նշանակման, ինչպես նաև վերապատրաստման, որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը**

### **Տնօրեն՝**

Կարինե Գրիգորի Մեհրաբյանը ուսումնարանի տնօրեն է աշխատում 1994 թվականից: 1980թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը՝ ստանալով կենսաբանության և քիմիայի ուսուցչի որակավորում:

Մարինա Բաբկենի Մկրտչյանը ուսումնարանի տնօրեն է աշխատում 1999թ. օգոստոսի 23-ից և չի դասավանդում: Ավարտել է Վ. Բոլոսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտը, ստացել է ռուսաց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում:

Ըստ հաստիքացուցակի՝ ուսումնարանն ունի 39 աշխատող: Վարչատնտեսական անձնակազմում ընդգրկված են 21 աշխատակիցներ:

Տնօրենը դասավանդում է <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>, <<Էկոլոգիա>> առարկաները:

Ուսումնարանի մասնագիտական մոդուլներ և առարկաներ դասավանդող բոլոր դասախոսները և վարպետները պարբերաբար վերապատրաստվել են <<Մասնագիտական կրթության և զարգացման ազգային կենտրոնի>> կողմից, մասնակցել են չափորոշչի վերանայման գործընթացին:

Ուսումնարանում առկա են աշխատակիցների և տնօրենի միջև կնքված աշխատանքային պայմանագրեր, ինչպես նաև՝ տնօրենի՝ լիազորված պետական մարմնի հետ կնքած աշխատանքային պայմանագիր:

Դասավանդող անձնակազմից 14-ը ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն: Արտադրական ուսուցման 8 վարպետներից 3-ը ունեն բարձրագույն կրթություն, 3-ը՝ միջին մասնագիտական, 1-ը՝ միջնակարգ, 1-ը՝ նախնական մասնագիտական /արհեստագործական/:

Ուսումնարանի հանրակրթական առարկաներ դասավանդող մանկավարժների մի մասն է մասնակցել վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներին:

2014 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 1-ը ուսումնարանում աշխատանքից ազատվել է 13 մանկավարժական աշխատող՝ 5-ը արտադրական ուսուցման վարպետ, 8-ը՝ ուսուցիչ, ընդունվել է 9 արտադրական ուսուցման վարպետ, 7 ուսուցիչ:

Մասնագիտական առարկաների մեկ դասախոս չունի համապատասխան մասնագիտական կրթություն և մասնագիտական աշխատանքային փորձ:

**Չի պահպանվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի № 1009-Ն հրամանով հաստատված նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2304 «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության «Վարսահարդար» որակավորման պետական կրթական չափորոշիչի 12-րդ կետի 3-րդ և 5-րդ ենթակետերի (Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա համապատասխան մասնագիտական կրթություն և մասնագիտական աշխատանքի փորձ) պահանջը:**

**13. Կրթության որակի նկատմամբ հաստատության կանոնադրական պահանջների կատարումը, հաստատությունների կառավարման մարմինների լիազորությունների իրականացումն ու պահպանումը**

**13.1. Կրթության որակի նկատմամբ հաստատության կանոնադրական պահանջների կատարումը**

Կրթության որակի ապահովումը, ուսումնական և աշխատանքային կարգապահությունը ուսումնարանի վարչական և մանկավարժական անձնակազմի ուշադրության կենտրոնում է: Այն արտահայտվում է բավարար թվով դասալսումների, փոխադարձ դասալսումների, բաց դասերի, թեմատիկ գրավորների, բացակայությունների ամենօրյա հաշվառում իրականացնելու եղանակով: Առարկայական մասնախմբերի և մանկավարժական խորհրդի աշխատանքային պլաններին համապատասխան՝ կատարվում են ինչպես հանրակրթական, այնպես էլ մասնագիտական առարկաների դրվածքի ուսումնասիրություն, կատարվում են դրանց արդյունքների վերլուծություն, քննարկումներ: Սովորողների հետ տարվում են ակտիվ

արտաուսումնական աշխատանքներ: Կազմակերպվում են մրցույթներ, բաց դասեր, այցելություն թանգարաններ, կինոդիտումներ, գրական միջոցառումներ, էքսկուրսիաներ:

Տեսչական ստուգման ժամանակահատվածում կատարվել է սովորողների հաճախումների ամենօրյա հաշվառում: Ստուգման օրերին բացակայող սովորողների միջին թիվը կազմել է 8.7%՝ հաճախակի բացակայել են 10 ուսանողներ, որոնց բացակայությունների պատճառների վերաբերյալ տնօրինությունը և ուսումնական խմբերի ղեկավարներն ունեն հիմնավոր տեղեկություններ:

Առկա են տնօրենի և փոխտնօրենի կողմից իրականացված դասալսումների մատյանները:

Մասնագիտական և հանրակրթական մեթոդական միավորումների նախագահների կողմից կատարվել են բավարար քանակությամբ դասալսումներ: Մեթոդմիավորման նախագահները ունեն դասալսումների գրանցման մատյաններ: Գործածության մեջ են մասնագիտական առարկաների՝ մոդուլների յուրացման գնահատման ամփոփաթերթերը:

### **13.2. Հաստատության կառավարման մարմինների լիազորությունների իրականացումն ու պահպանումը**

Ուսումնարանի կառավարման մարմիններն են՝ ուսումնարանի խորհուրդը (11 անդամ) և գործադիր տնօրենը:

Ուսումնարանի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմը հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի՝ 19.06.2012թ. №590-Ա/Ք հրամանով: Խորհուրդն ունի գործողությունների հաստատված ծրագիր, նիստերի արձանագրությունների գրանցման մատյան:

Իրականացրել է տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողությունը, քննարկել և հաստատել նրա հաշվետվությունները, ուսումնարանի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը: Հաստատել է նաև ուսումնարանի ռազմավարական ծրագիրը:

Լիազորված մարմնի ղեկավարի հրամանները, հրահանգները, հանձնարարականները գրանցվում են, սահմանված ժամկետներում ապահովվում դրանց կատարումները:

Տնօրենի կողմից աշխատանք է տարվում հաճախումների հաշվառման և բացակայությունների վերլուծության, ուսումնական և աշխատանքային կարգապահության ամրապնդման ուղղությամբ:

Ուսումնարանում առկա են ներքին կարգապահական կանոնները, ուսումնարանի զարգացման հեռանկարային ծրագիրը:

Ուսումնարանում գործում են մանկավարժական խորհուրդը, ուսանողական խորհուրդը, ծնողական խորհուրդը:

### **14. Համագործակցությունը ծնողների հետ**

Ուսումնարանում պարբերաբար հրավիրվում են ծնողական ժողովներ, քննարկվում ընթացիկ խնդիրներ և ուսանողներին առնչվող հարցեր:

Ընդունելության կազմակերպման գործընթացին մասնակցում է նաև ուսանողական խորհուրդը: Ուսումնարանի ծնողական խորհրդի հետ տեսչական խումբը կազմակերպել է հանդիպում, անցկացվել են քննարկումներ: Ծնողները գոհունակություն են հայտնել ուսումնական հաստատության տնօրինության, մանկավարժական աշխատողների, վարպետների աշխատանքից, սակայն դժգոհ են ուսումնարանի շենքային պայմաններից՝ նշելով, որ ուսումնարանն ունի հիմնանորոգման կարիք, գազիֆիկացված չէ, չունի ջեռուցման համակարգ: Զեռուցումն իրականացվում է փայտի վառարաններով, որը չի ապահովում անհրաժեշտ ջերմաստիճան, սանհանգույցներն անմխիթար վիճակում են:

### **15.«Ապագան քոնն է» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Նունե Նարինյանի եզրակացությունը**

Ներգրավված լինելով ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության կողմից «Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում 2016թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 11-ը անցկացված տեսչական ստուգման աշխատանքներին՝ որպես հասարակական կազմակերպության ներկայացուցիչ արձանագրեցի հետևյալը.

Ուսումնական հաստատության շենքը անմխիթար վիճակում է՝ անբարեկարգ: Տանիքից թափվող ջրի հոսքը քայքայել է միջանցքների և դասասենյակների պատերը, քայքայել մանրահատակը: Դասասենյակները ջեռուցվում են փայտի վառարաններով, որը չի ապահովում անհրաժեշտ ջերմաստիճան:

Այնուհանդերձ, շենքային անբարենպաստ պայմանները չեն խաթարում դասապրոցեսի բնականոն ընթացքը: Զգացվում է, որ դասախոսները և վարպետները պատրաստված են և տիրապետում են իրենց աշխատանքին: Ուսանողները ակտիվորեն ներգրավված են ուսումնական գործընթացում: Ակնհայտ է ուսումնարանի ղեկավար և մանկավարժական կազմի սրտացավ և ջանասեր աշխատանքը:

Կրթության պետական տեսուչները, կատարելով իրենց վրա դրված վերահսկողական գործառույթները՝ տվյալ դեպքում տեսչական ստուգման աշխատանքները, նաև ուսումնամեթոդական օգնություն էին ցուցաբերում աշխատակազմին:

Տեսչական ստուգման հիմնական նպատակն էր հանդիսանում վեր հանել տվյալ ուսումնական հաստատության առկա խնդիրները, ուժեղ և թույլ կողմերը, հատուկ ուշադրություն դարձնել նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության մասնագիտությունների

պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարմանը, կրթության բնագավառի օրենսդրության կիրառման ապահովմանը:

### **Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Ստուգման արդյունքում հայտնաբերված խախտման վերաբերյալ կազմվել է ակտ, որի մեկ օրինակն օրենքով սահմանված կարգով և ժամկետում տրվել է ուսումնարանի տնօրենին:

#### **Առկա են նաև խնդիրներ, որոնք լուծում են պահանջում՝**

- ուսումնարանի մասնաշենքը ունի հիմնանորոգման կարիք,
- ուսումնարանը գազիֆիկացված չէ, չունի ջեռուցման համակարգ: Զեռուցումն իրականացվում է փայտի վառարաններով, որը չի ապահովում անհրաժեշտ ջերմաստիճան, սանհանգույցներն անմխիթար վիճակում են,
- տանիքն անմխիթար վիճակում է,
- ուսումնարանում չկան բուժկետ, ճաշարան (բուֆետ),
- ուսումնարանում սովորողների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերի և արտաուսումնական մարզական աշխատանքների կազմակերպման համար չունեն համապատասխան պայմաններ՝ մարզագույք, մարզահրապարակ, տիպային մարզադահլիճ /դասերն անցկացվում են հարմարեցված դասասենյակում/,
- ուսումնարանը չունի ուսումնական զենքի պահպանման սենյակ և ուսումնական զենք,
- առկա են չվերանորոգված արհեստանոցներ և լսարաններ (վերանորոգման դեպքում ուսումնական գործընթացը կլինի առավել արդյունավետ),
- ուսումնարանում առկա գույքը, լաբորատոր սարքավորումները, ուսումնադիդակտիկ պարագաները, տեխնիկական միջոցները, սարք-սարքավորումները, քարտեզները բավարար քանակությամբ չեն, իսկ առկա գույքը մասամբ է համապատասխանում չափորոշիչ պահանջներին, ինչն ազդում է մոդուլային ծրագրերի արդյունավետ իրականացմանը,
- մասնագիտական որակավորմանը ոչ համապատասխան առարկաներ է դասավանդում 1 արտադրական ուսուցման վարպետ:

### **Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Կրթության և ուսուցման որակի բարձրացման, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման և ուսումնարանի զարգացման նպատակով առաջարկվում է.

1. Հայտնաբերված խախտման և թերությունների հետևանքները վերացնելու նպատակով ուսումնարանի տնօրենին տալ կատարման համար պարտադիր հանձնարարական:

2. Ստուգման արդյունքի վերաբերյալ կազմված հաշվետվությունը և ակտը ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարին:

Տեսչական խմբի ղեկավար՝  
ՀՀ կրթության պետական տեսուչ՝

Կ.Արսենյան

Տեսչական խմբի անդամ՝  
ՀՀ կրթության պետական տեսուչ՝

Կ. Գրիգորյան